



174. ՔԱԶԱՆՑ ԹԱՐԱՎՈՐԸ

Մըն թաքավերի ինձնմ ա իրեք տղա, թաքավերը ուրան տը-
ղորցն ասում ա.—Ա՛ տղերք, եկեք ծեզ փառակեմ:

Տղերքն ասում են.—Մեզ աման մընիս մին ծի տու, ճընճպի
խաշլը տու, եր կենանք, քյինանք մըզ հըտի ախճիկ ճարենք:
Համ էլ մենք իրեք ըխպերավ պետմա իրեք քեր օզենք, վեր հաշտ
ապրենք, ուրո՞ւր անա տուս չիկյաբ:

Թաքավերը ծիյեր ա տամ, խարշ-խաշլը ա տամ տղորցը,
թա.—Քյացեք, աստոծ ծըզնընես:

Տղերքը նի իլան ծիյերը, քյինացին: Շատ են քյունչնմ, թա
քիշ, աստոծ գյիղդա: Ուրերան մըն օր ուռաջահ ըն կյամ իրեք ըխ-
ճնկա: Թաքավերի տղերքը պարև են տամ: Ծխճշկերքը պարևն
առնում են:

Թաքավերի մեծ տղան հըրցընում ա.—Հի՞նչ ըխճշկերք եք:
Մեծ ախճիկն ասում ա.—Մենք մըն տըզըրածի ըխճշկերք
ենք, իրեքս էլ քըզերք: Տղերքն ասում են.—Լըհա մենք էլ էտ ենք
օզում:

Մեծ ախճերը մեծ քըզորք հըրցնում ա.—Տու հի՞նչ սանաբ
օնես:

Մեծ քյուրն ասում ա.—Ես խալի կյործող եմ, էտ խալիտ վեր
փըռես, թաքավերին հիշքան ժողովորթ օնի, լիրան կընըստի, հա-
լա մըն պան էլ էվել կմնա:

Մեծ առան ասում ա.—Ես էլ չտ եմ օղում:

Միշնակ ախպերն ա հըրցնում միշնակ բվորք.—Տու հինչ փեշակ օնես:

Միշնակ քյուրն ասում ա.—Ես նըհենց խորակ պէտեմ, վեր թարավերը ուրան ումբրումը վեշ կերալ ա, վեշ տեսաւ, վեշ էլ լսալ:

Միշնակ տղան ասում ա.—Ես էլ լըհա չտ եմ օղում:

Կումի տղան ա կումի ըխճղկանը հըրցնում.—Թա տու հինչ փեշակ օնես: Կումի քերը ասում ա.—Ես վեշ մըն փեշակ չօնեմ, ամմա առաջի դնումը կըպիրիմ նոխտակ՝ մըն տըղա, մըն ախճիկ: Տըղի մաղերը վեսկի կինեն, ըխճղկա պիծի մանդը վեսկի կինի:

Կումի տղան ասում ա.—Ես էլ հալ համան չտ եմ օղում:

Միշները քյուշում են, քյունում տըղբրածին տունուրը. Տըղածը կյամ ա, հըրցընում.—Թաքավերի տըղերք, խե՞ր ինի, հո՞ր եքալ:

Թաքավերի տըղերքն ասում են.—Մենք իրեք ըխպերավ եկալ ևնք իրեք քուր առնենք, տուկ էլ իրեք ախճիկ օնես, մեզ տու Տըղածն ասում ա.—Լավ, վեր թըհենց ա, ես իմ իրեք ըխճղկորցը ծեղ կըտամ:

Թաքավերի տըղերքը եր են օնում տըղբրածի ըխճղկորցը տունում ծիյանցը թարքին, քյուշում, կյամ, կյամ են հըսնում թաքավերին բըղաթին կոխկը:

Խարարչին խարարը տանում ա թաքավերին, թա.—Թաքավեր, քու տըղերքը հառթները պէտքում են:

Թաքավերը եր ա օնում ուրան վաղիր-վերինին, կյամ տըղորցը առաջը, եր են օնում կյամ ուրանց պալատը, հըրսանիք անում:

Մըն քանի օր ետո խարարչին խարար ա պէլրում, թա.—Հըրեան թաքավերը գորք եր կալած կյամ ա թաքանց թաքավերի յիրա: Քաջանց թաքավերի իրեքան տըղերքը զորք են եր օնում, քյունում կըում:

Խարարը տանք հըսթներան:

Մեծ քվոր նան միշնակ քվոր ասածնին սուս ա տուն կյամ: Ամմա կումի քվոր ասածը դուլզ ա տուն կյամ: Կումի քերը պըրանում ա, վենդը. ծոնդըն անում, ծոնդըն տափին տամ, մըն քիշեր մըն նոխտ խորակ պէլրում՝ մընը տըղա, մընն ախճիկ: Տըղին մաղերն ա վեսկի ինժնմ, ըխճղկան՝ պիծի մանդը:

Էս վեր տեսնում են, մեծ քըվերքը ինադու օզում են տղրաքնն։
Տառմորք կաշառք են տամ, խօխնին ըրկորքան խոխորցը տանում
ա քյուցմամ քոլը, Խոխորցը տեղն էլ մըն ճոխտ շան թուկեք ա
պուրում, քյուցմամ ըրորոցը։

Մեծ քըվերքը քյուննամ են թաքավերին ասում, թա կումի
հառթնտ մըն ճոխտ շան թուկա յա պերալ։ Թաքավերը հըրամայում
ա կումի հառթնին ուրան թուլուտանցը նըհետ տանեն ածեն մըն
մըթեն պադվալ, հիշքան քյինացող-եկող կա, թող կյան թըրեն
թուկա պժուրող հառթնին իրեսին, մըն քար էլ քիցեն պադվալը, էտ
անառակ բանի հետիւ Ստո թաքավերը նամակ ա կյուրում կումի
տրդին, թա։—Աշկըտ լուս ինի, կընեկըտ պըրանալ ա, մըն ճոխտ
շան թուկա յա պերալ։

Մըհեկ խարար տանք վեսկիմազ տըղայան, մըն էլ վեսկի պի-
ծի մանդ ունեցող քյուր ըխպերան։

Մըն կաղ դկ կյամ ա մեշան, տեսնում ա էրկու խոխտ քի-
ցած ըտեղի Կաղ դկը եր ա օնում խոխորցը, տանում տամ Քա-
չանց թաքավերին։ Քաչանց թաքավերը խոխորցը եր ա օնում, տըս-
նըհենգ տարի պահում։ Վեսկիմազ տըղան տըսնըհենգը տըրեկա-
նում տառննամ ա շատ ուժեղ տըղա։ Ուրան թայդաշ խոխորցը
նըհետ վերին տափին ա կյամ, յա վենդըն ա կոտրում, յա ծեռքը,
յա մեռնում ա։ Ժողովուրդը կյանդյատ ա անում թաքավերին, թա
էտ տըղին կուրցուրու մըզանա, թաշան չէ, մեր խոխորցը շիմին կը-
կըտորի։ Թաքավերը կանջում ա կաղ դկին, ասում։—Էս տղաս նա
ախճիկը ըշտեղան պերալ ըս, տար ընդեղ էլ կուրցուրու Կաղ
դկը տըղային էլ, ըխճըկանն էլ տանում ա քոլը, ըշտեղ ճարալ էր,
ընդեղ էլ եր քյուցմամ, ետ տանում։

Տղան նան ախճիկը ետ են տառնում, կյամ ուրանց հոր քա-
ղաքը ճարում, քյուննում մըն պըռավի տոն զոնազ տմգյում։ Տղան
պըռավին հըրցընում ա, թա։—Նանի, հի՞նչ օնես, հի՞նչ շօնես։

Պառավն ասում ա։—Վերթի, վեշ մըն պան էլ ա օնեմ վեշ,
իլած-շիլածս մըն ծի յա, էն էլ հես ա իրեք ամիս ա քիցած կյու-
մը, տուռնը լիրան քլած, գյունդում շըմ սազ ա, թա ըստակալ ա։

Տըղան եր ա կենում քյուննամ տեսնում ծին հալա սազ ա։

Մըհեկ խարարն ըշտեղան տանք, խարարը տանք Քաչանց
թաքավերի իրեք տըղորցան։ Կըուը պըրծընում ա, սաղ-սալամաթ
տոն են կյամ։

Կումի տըղան կյամ ա նի մըտնում ուրան օթաղը, էլ ընդեղան տնեւ չի կյամ էն հըմընշիլան, վեր ուրան կընեկը շան լակուս ապերալ:

Վեսկիմազ տղան ծիյին թումարում ա, կոռմիտ անում, նի՞ ինում բյունում վերսի, վերս անում, համ ինքը օտում, համ էլ քվորը նան պըռավին պահում:

Թաջանց թարավերն ասում ա մեծը նան միշնակ տղին, թա.— Սեր կումի ախապերը մեխկըն ա, ութաղումը նստալ ա, տնեւ չի կյամ, քացեր եր կալեր, տարեր վերսի, բալթի պատառ սերտը պաց ինի:

Մեծ նան միշնակ ախապերը քյունում ըն կումի ախապորը կոխուկը, զոռավ բըրըշընում, վեր իրեր օրավ ուրանց նըհետ վերսի քյինա: Եր ա կինում կումի տըղան մեծ ախապորը նըհետ քյունում:

Շատ են քյունում, թա քիշ, աստոծ կըգլիդա: Ծընհըպնի պըգահում են վեսկիմազ տըղին: Թարավերին կումի տըղան վեր տեսնում ա վեսկիմազին, ախ ա անում, թա.—Աստոծ, էս տըղաս իմն իներ, ես ճուր քծի ծըրբերին, ինքը իրեսը լիվանար:

Մեծ ախապերը վեսկիմազին հըրցընում ա, թա.—Վեղկիմազ տղա, մեզ էլ փայ կա՝ քու վերսից:

Վեսկիմազն ասում ա.—Կա, հա՛, բա հուց չի՝ կա, էս չորս վերս ա, կես կանեմ, իրերը ծըզ, մընն ինձ: Ասում ա, ծիյին անա եր կյամ, վերսը չորս տեղ փայ անում, իրերը տամ թարավերին տըղորցը, մընը՝ ինքը եր օնում, ծին քյունում, կյամ պըռավին տոնը՝ բըվորը կոխսկը:

Թարավերի տըղերըն էլ վերսը տանում են տոն, տամ ուրանց կընանուցը, վեր ճաշ է փեն: Մեծ նան միշնակ քվերթը գյունում են, վեր էտ վերսը վեսկիժամ տղան ա ըրալ, դաստին կանշում են տատմորցը, թա.—Քու տեն քիցած վեսկիմազ տղան մըն էլ վեսկի պիծի մանդ ախնիկը հալա սաղ են, կըթինաս, հենց կըկուրցընես, վեր հետն ա թեփուռնին յուրովան վեշ:

Տատմերն ասեց.—Ես կըթինամ, ընդանը հենց տեղ կըղարկեմ, վեր էլ յուրովան վեշ: Ման կյալավ քյունում ա պըռավին տոնը ճարում:

Նի ա մըտնում տոն, տեսնում ախնիկը ախապոր պերած վերսը թիփոքհան ա անում, եր օնում թեփուռը տեսնում թանկագին թեփուռ ա, ասում ա.—Ախսուս չի՝ քու ախապեր, ախնի, վեր էն յարու ծիյին յիրան ա վերսի քյունում, քու ախապոր սազում ա հրեղեն Գըրխանասի ծին:

Թերը էս խոսքիս յիրան տըխըրվում ա: Ուրուգյունը ախապերը տոն ա կյամ, տեսնում քերը տիսուր նստած, ասում ա.—Ա՛ քեր,

խը՝ ևս թըհենց տիւըրվալ, ախր քեզ հի՞նչ պակաս եմ պահում, թաշնա նըհենց քյասիր տղի կտամ, վեր օրվա հացի կարոտ կըմընասի: Թերն ասում ա.—Այ ախսպեր, ևս ըտա դարդը շեմ քաշում, ևս քեզ հետի եմ մըտածում, վեր տու էն եզտուտ յարուն ևս նիհ ինում, վերսի քյունում, մըզ հետի համութ ա, քեզ հարկավեր ա Գըրխանասի ծին: Ախսպերն ասում ա.—Եթա աստուծ օղի, կինիւ Ասում ա, ծին քյունչում, քյուննում Թաջանց թաքավերի պալատի առաջ կաղնում: Խաքարը կյամ ա թաքավերին, վեր քու լըրազը եկալ ա, թաքավերը տուս ա կյամ, թա.—Զըրադ ջան, խե՞ ևս եկալ: Էտ ճընապարը շատ տիժար ա, քյինալ միր, քեզ շատ փորցանք կըպըտահի: Ամմա տըղան անջուկ չի օնում, քյուննում ա:

Քյունում ա, ճընհըպի տեսնում մին օխտանասուն յաշի հիլիվեր ճընհըպին մել տեղը նըստած: Հիլիվերը տըղին հըրցընում ա, թա.—Այ տղա, հոր ևս քյուննում:

Տղան ասում ա.—Քյուննում եմ Գըրխանասի ծին պիրեմ: Հիլիվերն ասում ա.—Ես տըսնըհենգյ տըրըկանաս տեսը ըստեղ եմ, Գըրխանասի ծիլին եմ ման կյամ, ամմա էսօր օխտանասուն տըրեկան եմ տառանլ, հալա էտ ծիլիտ տեղն էլ շեմ գյիղացալ: Տղան ասում ա.—Զէ՛, հինչ էլ օզում ա ինի, ևս պետմ ա Գըրխանասին ճարեմ: Հիլիվերն ասում ա, վեր թըհենց ա, ևս քեզ մըն պան կասեմ.—Գըրխանասի ծին Սև սարումն ա ինում, Սև սարումը օխտը ախսպէր կա, ամմեն ըռավկետ ծին կյամ ա էն օխտը ըխաղրան ճուր խըմում. կըբյինաս Թաջանց թաքավերին անա օխտը փութ պուրթինք կօնես, օխտը թուզուլ կյինի, մըն յիհար, մըն շիլավ. կըկյաս Սև սարին օխտը իխսպիրինին օխտը փութ պուրթավ կօնես, ճուրը կըկըտրես, ընդանց տեղը օխտը թուզուլ կյինին պաց կըթողես, տու էլ մըն քարի տակ թաք կըկենաս. Գըրխանասի ծին կըկյա ճիրի տեղ կյինին կըխըմի, կըհարփի, կասի. «Մըն հողածին ինի, մըն էրկու կյուզուն նիհ իներ ինձ քիշեր, շանս դինշանանար»: էն վախտը տու տուս-կըկյաս քարին տական, յըհարը կըտիննս մեշկին, շիլավը կըբիցես, նիհ կինես, կըբյինաս...

Էտ լըսիլան ետը վեսկիծամ տըղան հիլիվերին ըստին տհա էլ անում ա: Քյունում ա Թաջանց թաքավերին անա օխտը փութ պուրթ, օխտը թուզուլ կյինի, մըն էլ մին յիհար, մըն շիլավ ինք օնում, կյամ Սև սարին օխտը ախսպէրը օնում, կյինին ածում նովերը, ինթը մըն քարի տակ թախ կինում: Գըրխանասի ծին կյամ ա կյինին խըմում, հարփում, կաղնում, կըուզուց թափ տամ, թա.

—Հայ մըն հողածին ինի, ինձ նիշ ինի, մըն էրկու կյուզոխ
ժիշի, շանս դինջանա...

Հս դարումըս տըղան տոնս ա կյամ քարին տական, յիշարը
տունում ծիյին մեշկին, շիլավը քյուցում, թըռնում, նիշ ինում:
Սին թըռնում ա երդյինք, վեր տըղին արևի առաջ խըրավի, տըղան
ծիյին մեշկան անց ա կինում փորին տակը, Սին քըշանում ա,
վեր տըղին տա վեղին, քարին, ըսպանի, տըղան անց ա կճնում
ծիյին մեշկը: Ըստեղ ծին խըրավում ա, թա.—Այ տըղա, տու ինձ
հըխտեցիր, ես քեզ հըպատակ եմ, ամմա իմ շիլավը օրիշ մարդի
ձեռք լտաս, հա...

Տըղան ծին քյուշում ա, կյամ հիլիվերին կոխկը: Հիլիվերը
պաշում ա վեսկիծամ տղի նակատը, թա.—Քյինա պարն, քաջ տը-
ղա ես:

Վեսկիծամ տըղան ծին քյուշում ա, կյամ Թաշանց թաքավե-
րին քաղաքը: Մինչևսի քաղաքին հըսնիլը տըղան ասում ա.—Ես
յարու ծիյի յիրա յի առաջ վերս անում, մընեկ էս Գըրիսանասի
ծիյի յիրա վերս անեմ, առոք, փառոք քյինամ:

Խաբարը ըշտեղա՞ն տանք, խաբարը տանք Թաշանց թաքա-
վերան: Թաքավերը կանչում ա ուրան մեծ նան միշնակ տըղոր-
քը, թա.—Մեր կումի ախպերը բեցյեփ ա, քյացեք ութաղան
տոնս կալեք, ծըզնընետ ման ըծեցյեք, թող սերտը պատառ պաց-
վի:

Իրեք ախպերը ծի լըն նըստում, վերսի քյուննում: Ծընհըպնի
պըտահում են վեսկիմազ տըղին, Թաքավերի կումի տըղան վեր
տեսնում ա վեսկիմազ տըղին, հձւշը քյուննում ա, եր ա ինգուում...

Մեծ նան միշնակ ախպերը կումի ախպորը հձւշը կյուլոխն են
պէնքում, ասում:—Համոթ լի՞ քեզ, Թաքավերի տըղա իլած տե-
ղավըտ մըն տըղա տըսնալավ հձւշըտ տանիլ ըս տամ:

Թաքավերի կումի տըղան վեսկիմազ տըղին ասում ա.—Այ
տղա, քու վերսատ մեզ փայ կա՞ Վեսկիմազ տըղան պատասխա-
նում ա, թա.—Հա, կա, վերսը շորս պամին ենք ընելու, տուք իրեք,
ես մըն: Թըհնաց էլ վերսը պամին են անում, տեղ թողում, քյու-
ննում: Ամմա էս դոնում ծիյին անա եր լի եկը, քանի վեր ծին
ասալ էր.—Զիլավս օրիշի տաս վել:

Թաքավերին տըղերքը վերսը տարան տոն, տումին կընանու-
ցը, թա թիմիզեցեք, իփեցեք: Կընանիթը լիշեցին, տեսան, վեր էտ
վեսկիմազ տըղի վերսըն ա: Մըն էլ կընշեցին տատմորը, ըսե-
ցին:—Մենք քեզ ըսեցինք հենց պանի դարկի էն վեսկիմազ տը-

զին, վեր քյինա, կյա վեշ, ամմա էն քյացալ ա հրեղան Գըրիսանասի ծին պերալ, սադ սալամաթ աւ Տատմերն ասում ա.—Մըհեկ ես քյինամ ընդան նըհենց տեղ զարկեմ, վեր քյինա, էլ կյա վեշ: Տատմերը եկը պըռավին տոնը, պարիօր տըվեց, նըստեց: Վեսկի պիծի մանդավ գվորը ասեց.—Բա համութ լի՞ քու ախպորը, վեր նըհենց հըրեղան ծի օնի, լավ վերս ա անում, ամմա էս քյինա ընջուած սըվացած տանն ա ապրում: Քերն ասում ա.—Բա հինչ անենք: Տատմերն ասում ա.—Սեզ հարկավեր ա փիզի վեսկուռ, վեր ծեր տանը շափաղ տա, լուս ինի, թամակն ինի:

Քերը շատ ա տըխըրվում: Ուրուգյունը ախպերը տոն ա կյամ, տեսնում քերը տըխուր ա, ասում ա.—Ա՛ քեր, խե՞ տըխուր ըս, քեզ կըտամ տըվըրածի տըղին, վեր զյիդաս: Քերն ասում ա.—Հտա հետի լեմ տըխուր, մեզ հարէավեր ա փիզի վեսկուռ, վեր մեր տանը լուս ինի, մեզ համութ ա էս տանը կենանք: Ախպերն ասում ա.—Ա՛ քուր, էտ էլ կանեմ, խե՞ լըս տխըրվում: Ասում ա, նիհ ունիւմ ուրան ծին, քյուշում քյունում թաշանց թաքավերին կոխկը: Խաբարը տամ ըն թաքավերին, թա.—Թու Զըրաղըտ եկալ ա: Թաքավերը տիւս ա կյամ, թա.—Զըրաղ, զոր ը՞ս եկալ: Զըրաղն ասում ա.—Եկալ ըմ փիզի վեսկուռ տանեմ, ինձ հետի մըն օթաղ շինեմ: Թաքավերն ասում ա.—Թեզ զըզրկողին վիզը կոտրի, փը-ղերը քեզ կըճարթեն, քյինալ միր: Ամմա տըղան լսում լի, քյու-նում ա հըսնում ուրան ծանոթ օխտանասուն տըրեկան հիլիվերին: Պատմում ա ուրան սրտին օզածը:

Հիլիվերն ասում ա.—Տիժար պան ա, ա՛ վերթի, եկ քյինալ միր: Ամմա տըղան լսում լի: Մին քիշեց, քյինաց: Մըն խիլլա վեր քյունում ա, ծին կաղնում ա, էլ վենդը վենդին ըռաշլին չի տա-նում: Տըղան հիշքան ըղաշանք-պըղատանք ա անում, ծին քյունում լի, վեր քյունում լի: Ետա վեր ըրշարվում ա, ծին լուզու ա առ-նում, ասում.—Ա՛յ տըղա, խե ինձ լըս մըն պան հըրցընում, էն հիլիվերին անա ես հըրցընում: Տըղան ասում ա.—Ընդա հետի վեր ես քեզ էն հիլիվերի խոսկավն եմ ճարալ, հինչ կա՞, հիլիվեր մարթ ա էլի: Մին ասում ա.—Քյինա թաշանց թաքավերին անա քըռասուն դավա-օղտ ինք կալ, քու[ի] քյինա սարը, ինձ էլ էն-քան էս զոլը էն զոլը քիշի, վեր քըռանոնքս տուս կյա, հին ա էտ դարումըտ փիզերը կըտաղած կիկյան ուրենք կըսպանեն, կըփշըն, ետավ տու ընդուց վըսկըռնին կըհըվաթես, կըսպիրես:

Մին վեր կա, խելունք հեյվան ա էլի: Հա՞ հին ա թըհենց էլ

անում առ Փիղերը ուրուր ըստանում ըն, տըղան ընդաց վըսկըռին հըմաքում ա, պեռնում բըռասուն օղտին, ետ տառնում, կյամ:

Վըսկըռին պեռնած կյամ ա էն Հիլիվերին անա շունուրակալ ունում, ետո կյամ թաքավերին կոխկը, թաքավերը թարիփ ա անում տըդին: Տըղան պուրում ա փիղի վըսկեռում մըն նախշուն տոն շունում, քվորը տունում միշին, ետավ ծին նի՞ ունում, քյունում հիրան վերսին:

Խարարն ըշտե՞զան անոթ, խաքանը էլլա թաքավերին տըղորցան տանք, թաքավերը կանչում ա մեծն ու միշնակ տղորցը, թաժեր կումի ախավերը տիսուր ա, ջյացեք եր կալեք վերսի տարնթ, թող սերտը պանվա, ուրախանա: Թընենց էլ անում ըն, ծիյանցը նի՞ ըն ունում, քյունում ման կյալի, էլլա պըտահում էն վեսկիմագ տղին: Վեսկիմագ տըղան էլլա վերսը շորս փայ ա անում, մընն ինքը յոր օնում, իրեքը տամ թաքավերին տըղորցը, քյունում հիրանց տոն:

Թաքավերին տըղերը վերսը պուրում ըն տամ ուրանց կընանուցը, թա.—Թիմիզեցեք, իփեցեք: Էս դնուում էլ կընանիք կանչում էն տատմորց, թա.—Տու կըրացիրվել վեսկիմագ տըղին կյուլուն օտես:

Տատմերն ասում ա.—Էս դնուում հենց տեղ զարկեմ, վերքինա, էլ կյա վեց: Տատմերը քյինաց վեսկիմագին քվորը կոխկը, թա.—Մընեկ վեր լավ ա, լավ ութըդնի օնեք, մարթաքարի պան ա, ամմա ծեր ճըրաքը լավը լի, ծեզ հարկավեր ա շամշրազի, վեր լուս տա ծեր ութըդներումը: Տատմերն ասում ա, տեղ թողում քյունում:

Ախավերը տոն ա կյամ, տեսնում քերը էլլա քթըպըռոշը կախ, ասում ա.—Ա՛ քեր, խե՞ տիսուր ըս, թեատ կըփըռնեմ, տունը քիցեմ, հի՞նչ ա պըտահալ, վեր ունքամեշտ պանվում լի: Քերն ասում ա.—Մեր ութըդներին սազում ա շամշրազի վեր լուս տա, էս ճըրաք անջախ մոլ ա անում:

Ըուավետը տըղան ծին նի՞ ա ունում, քյունում թաքավերին տուռնը, թաքավերը պանին պանը զյիդալավ, ասում ա.—Ա՛յ տըղա, եկ քարը կյոքատ եր ածի, քյինալ միր: Ամմա տըղան լսում շի, ծին քյունում ա քյունում լիլա համան Հիլիվերին կոշտը: Հիլիվերը հըրցընում ա, թա հո՞ր ըս քյունում: տըղան պագախանում ա, թա.—Թյունում եմ շամշրազին պիրեմ: Հիլիվերն ասում ա.—Ա՛ քալամ, էտ տիժար պան ա, ասլաննին քեզ կուտուր-կուտուր կանեն, կարալ լըս պիրես: Ամմա տըղան լսում շի, քյունում ա: Հըրեղան ծին մըն պատառ էլ քյունում ա, ետավ կազնում: Տըղան

հինչ անում ա, անում չի, ծին տեղան առնվանը չի կյամ։ Նոռ ծին ասում ա.—Այ տըղա, խե՞ ինձանա խորուրթ չես հըրցընում, հիլի-վերան ըս հըրցընում։ Տըղան ասում ա.—Բա հո՞ւնց չի հըրցընեմ։ Էն մարթը մեծ օրուտ ա տուվալ մեզ։ Մին ասում ա.—Դե վեր թըննեց ա, ինձ քիշի, քիշանք Քողի սարը անց կենանք, ընդեղ էն-քան ինձ կըթիշես, վեր ինձանա էրկու ճըզարցի նուր քըպինոնք քինա, ասլանինին կիկյան ուրուրոցավ կինդեն, էն վախար մէծ ըսլանին ճակատին շամշրաղը, թորավոր կտաս, ըսլանին փորը կճղիս, ընդեւանը շամշրաղին եր կօնես, կըթիշես, կըթինանք...

Տըղան ծիյին ըսածին տես ըրավ, ըսլանին ճըկատան շամ-լըրաղին թըոցրեց, քիշեց եկը հիլիվերին կոխկը, շունուրակալ իլավ, քիշեց եկը վերս ըրավ, շամշրաղին պերը տոն, տիրեց ու-թըզներումը, լունան ինգավ, շափաղ տուվեց աման զոլ։

Քաջանց թաքավերան խարար տանք։ Թաքավերը կանչում ա ուրան տըղուցը, թա։—Քիցեք կունի ախպորտ եր կալեք, տարեք ման ըժեցեք, թող պատառ սերտը պանվաւ իրեքան ախպերդը թը-հենց էլ անում ըն, առաջվա պես քյունում են, պըտահում վեսկի-մազ տղին, էտ էլ ուրան վերսը լորս տեղ պաժին ա անում, տամ թաքավերին տղուցը, մըն փայխ էլ ինքը եր օնում, կյամ տոն։ Թաքավերին տըղերքն էլ վերսը տոն են պուրունմ, տամ կընանու-ցը, թա։—Քիցեք թիմիզեցեք, իփիցեք ։ Մեծն ա միշնակ քվերը դաստին գլուղում են, վեր էտ վեսկիծամ տղի վերսն ա, էլլա կան-չում են տատմորը, թա։—Քավթառ շոն, վեսկիծամ տղին կուրոխը կրացիր վեշ օտես, դե քյինա կուրցուրու, թաշինա վային կընըս-տենք։

Տատմերը կյամ ա տըղին քվորը կոխկը, ասում ա.—Մեր տա-նը աման հինչ լավ ա, ամմա մըն պան ա պակաս։ Ախճիկն ասում ա.—Հի՞նչ ա պակաս։ Պառավն ասում ա.—Քու ախպորտ հար-կավեր ա Սարի Սոնմբոնկ, Բաղի Բոնկընկ ախճիկը։ Տատմերն ա-սում ա, քյունում։ Քերը տանը նըստում ա, լաց ինում։ Ուրու-գյունն ախպերը կյամ ա, թա։—Այ քեր, խե՞ լաց ես ինում, կը-տամ քեզ տանան տուս կըթիցեմ։ Քերն ասում ա.—Այ ախպեր, հունց չի լացի ինում, մեր տանը մըն պան ա պըկասում։

—Հի՞նչ ա պըկասում, ախճի։

Քերն ասում ա.—Քեզ հարկավեր ա Սարի Սոնմբոնկ, Բաղի Բոնկընկ ախճիկը, քանի՞ մըն ես թըննեց կընալու

Տըղան ծին նիշ իլավ, քյինաց Քաջանց թաքավերին ասեց։—Ես քյունում եմ Սարի Սոնմբոնկ, Բաղի Բոնկընկ ախճիկը պիրեմ ինձ հետի։ Թաքավերն ասեց։—Սիրաբին վիզը կոտրի, վեր քեզ

ասեր վել, թու ջիվան ջանին վայիս չի տառնար, եկ տու քիինալ միր, թու օրու ու մի անիլ, չանիլ ես, ափսուզ ես Ամմա վեսկի-մազը լսեց վել, ծին թիշեց, թիինաց հիլիվերին կոխկը: Հիլիվերը հըրցընում ա, թա.—Հո՞ր ես թյուննում: Վեսկիմազն ասում ա.—Թյուննում եմ Սարի Սումբռնիլ, Բաղի Բուլընուկ ախճիկը պիրիմ, Հիլի-վերն ասում ա.—Ղայ իմ անջուկնիս թըռանար, ես էտ պանըտ թը-դանա լրսի վել, էտ պանտ ինիլի պան լի, եկ ետ տառ, թիինալ միր, ափսուզ ես:

Էլլա տրդան լսեց վել, ծին թիշեց, թիինաց: Թոզա սարին կոխ-կին ծին կաղնեց, թիինաց վել, լուզու առավ, ասեց.—Այ տըղա, էլլա տու ինձ լսում չես, ինձանա չես խորութի հըրցընում: Տըղան ասեց.—Էն հիլիվերն իմ հոր տեղ ա, ընդան էլ պետմ ա ասեմ: Մին ասում ա.—Ղավ, վեր թըհենց ա, ինձ կըթիշես, կըթյինաս Թոզկա սարը անց կըկենաս, կըհըսնես Սիպտակ սարին, էն սա-րումը մըն անմահական խնձորի ծառ կա, ծառին տակին էլ մըն անմահական ախպհուր, էն ծառան իրեք խընձոր կըպուկես, մըն աման էլ անմահական ճուր ճուր կօննս: Սիպտակ սարին թըմա-կին մըն տոն կա, իրեք օթազին, էն իրեք օթազին մընին միլին ափրում ա Սարի Սումբռնիլ, Բաղի Բուլընուկ ախճիկը, տու խընձորը յիրա կանես ըխճըկանը օթազը, թա վեր ինգավ ութազին մելը, ախճիկը եր կօնի, տուն կիկյա, եթա ինգավ վել օթազին մելը, ես էլ, տու էլ քար կըտառնանք, վեր ախճիկը տուն կրկյա, ինձ նը-հենց կըթիշես, վեր նեստաս իրեք նըզարցի ճուր թրտոնք տուն կրա, շուտ անց կենանք Սիպտակ սարն ա Թոզա սարը, թաշնա էլ-լա քար կըտառնանք:

Տըղան ծիյին լսում ա, թյուննում ա Սիպտակ սարի անմահա-կան խընձորն ու ճուրը եր օնում, ըխճնում Սարի Սումբռնիլ, Բաղի Բուլընուկ ըխճըկա ութազին առաշը, խընձորը յիրա անում: Առա-շին խընձորը յիրա լա անում, ամմա եր ա ինգյում, ծիյին մինչեմ ծընզները քար ա տառնում, էրկուինչի խընձորն ա յիրա անում, էլլա եր ա ինգյում, տըղին մինչեւ կրտին ա քար տառնում: Իրե-քինչի խընձորան ա յիրա անում, խընձորը ինգյում ա ութազին մելը: Ախճիկը տուն ա կրամ: Վեր տուն ա կրամ, տըղին կեսն էլ, ծին էլ կենթանանում ըն:

Տըղան ըխճըկանը եր ա օնում, թարթյին տուննում, ծին նըհենց ա թյուննում, վեր իրեք նըզարցի ճուր թըրտոնք ա թյուննում: Ամմա դիրետան սաս էր կրամ: Մին տոյին ասում ա.—Այ տըղա, հինչ սաս էլ վեր լսես, ետ չի տառնաս հա՛, հեսա ասում եմ, ետ չի տառնաս, եթա ետ յիշեցիր, իրեքանս էլ քար կըտառնանք:

Սարը վեր անց են կենում, տըղան ետ ա եշում, մըն զայ անում: Սին ասում ա.—Հի՞նչ պըտահեց, ինչ՝ վայ ըրիր: Տըղան ասում ա.—Թու հաքյվատ էրկու մազ մնաց ծառին յիրա: Սին ասում ա.—Վեշ մըն պան, վախես վեշ, ես էլ գյիդացի թա ախճի-կը մնաց ծառին յիրա:

Թըհեննց քյուշիւմ ա տըղան, կյամ Քաջանց թաքավերին կոշտը: Թաքավերը արմանք-զարմանք կտրած էտ տղիտ քաջությանը յիրան, պաշում ա ճակատը, թա ապրես, տու հալալ տըղա ետ, էտ ախճիկտ էլ քեզ հալալ ա: Տըղան հորան նըշանածը պերում ա տոն, թողում քվորը կոխիկին, ինքը քյումում ուրան վերսին:

Էլլա Քաջանց թաքավերն ուրան մեծ նան միշնակ տըղին ասում ա.—Սեր կուճի ախպերը խեղճ ա, տարեք պատառ ման ածեք, բալքի դարդահան ինի:

Սիյանքը նըստում են իրեք ըխպերավ, քյունում ման կյալ: Հնաման տեղը պըդահում են վեսկիմազ տըղին: Թաքավերին կուճի տըղին հուշը քյունում ա, եր ինգյում: Զոռավ հուշը պիտրում են: Վեսկիմազը վերսը շորս տեղ պաժին ա տունում, իրեք պաժինը տամ թաքավերին տըղորցը, մընը ինքը եր օնում, ծին նիշ ունում, կյամ տոն:

Թաքավերին տըղերքը տոն են կյամ, մեծ նան միշնակ տըղան քյինում են թաքավերին ասում:—Թու կուճի տըղատ էլլա մեզ խայտառակ ըրավ, էլլա էն վեսկիմազըն տըսնալիս հուշը քյինաց, եր ինգյավ, Թաքավերն ասում ա.—Քյացեք էն տըղին կընչեցեք ըստեղ, պերեք տեսնամ հինչ տըղա՞յա, հու՞ վա, վեր իմ տըղաս ընդան տըսնալիս հուշը քյունում ա, եր ինգյում:

Խաբարը տանք Սարի Սումբուկ, Բաղի Բուկրուկ ըխճրկանան, վեսկիմազին կընդանան:

Անքուրգյունը վեր վեսկիմազը տոն ա կյամ, ախճիկն ասում ա.—Ա՛յ տըղա, է՛յ, էս ուրծւոյն թաքավերը քեզ դոնազ ա կընչիլու Թաքավերին պըլատին պըլալումը վեր մըն կնեղլ կա պանդարկված, հու վեր կոխկավն անց ա կենում, մըն քար ա յիրա անում, համ էլ թըքում, գյուղում ե՞ս...

—Հա՛,—ասում ա տըղան,—գյուղում եմ, էն վեր էրկու շան թուկա յա պերալ, էն շի՞: Ախճիկն ասում ա.—Հալ համան էն ա, վեր քյինաս էն կնգանը կոխկավն անց կենաս, քար քցիլի տեղ ըստեղաս քյինալիս վարթ կըքիցես, ընդեղան կյալիս՝ խընձնը, ետավ էլ թաքավերին ամբողջ պալատը զոնազ կըպիրես մեր տոն, ես ընդան վեսկի ըմըներում ճաշ կըտամ, վերջումը կասես. ուման մարթ թող ուրան ամանը նըհետը տանիւ:

Թըհնեց էլ ոնում ա: Թաքավերը վեսկիմազ տըղին զոնաղ ականչում, վեսկիմազը թյունում ա, թիինալիս շան թուլա պերած կընգանը մըն վարթ ա յիրա անում, թյունում ա թաքավերին տոնը: Թաքավերին կունի տըղան եր ա կենում վեսկիմազին ըռաշին ծառայություն անում: Ղոնախլըզը վեր պըրծընում ա, վեսկիմազը խընթըռում ա, վեր թաքավերը ուրան պալատավը կյա զոնաղ:

Եր ա օնում թաքավերին տանավ-տեղավ պուրում: Էն պըդ-վալին կոխակավն անց կընալիս մըն նոռն ա տուա օնում, յիրա անում կընգանը:

Կյամ նն տոն, տեսնում ամման հինչ ուրան տեղին հազիր յարաղ, նըստեցին վեր հաց օտեն: Հացը օտում են, նաշը վեսկի բմբնոցում ա ինում: Հացա ետը տըղան ասում ա.—Թող աման մընը ուրան ամմանը տանի հուրան տոն: Թաքավերը շատ զըրմացավ, ասեց.—Լավ, թող մընը մըն նազըլն ասի, եր կենանը, թյինանք: Վեշ մընը խոսաց վեշ: Սարի Սումբուկ, Բաղի Բուլբուկ ախճիկը եր կացավ, թա՝ ես կըպատմեմ: Ասեց.—Իմ պապի ծովան քըռասուն վերսոր հեռու կորիկ էր վարալ, ամմափ ծովան ծուկները տուա նն կյամ, կյամ կորեկն օտում, նոր ետ տանում, թյունում ծովը նի մըտնում: Էս վեր լըտում ա, թաքավերն ասում ա.—Ա թըհնեց սոտ կինի”, ժուկնը կարա” ծովան տուա կյա, քըռասում վերսոր ըրնապա թյինա, նոր ետ տանա սաղ-սալամաթ ծովը նի մտի, էտ իշկի հըվըտալի պա՞ն ա: Սարի Սումբուկ, Բաղի Բուլբուկը ծիծիդիկավ ասում ա.—Թաքավեր, վեր էտ հըվըտալի պան լի, բա էն հըվըտալի” պան ա, վեր մարթ օլանը, կընեգլը շան թուլենի ծընի, վեր թիցալ եթ պադվալը, էն քու կումի հարսիտ մասին ա: Հատեղ թաքավերը զըրմանում ա, մանղը կծում, թա.—տու գուզ ևս ասում, էտ հի՞նչ պան ա, հո՞ւ վըս տու Հարսն ասում ա.—Ես քու թոռանըտ կնեկն եմ, վեսկիմազը քու թոռնտ ա, վեսկի պիծի մանդավ ախճիկն էլ՝ ընդրա քերը, քու թոռներտ են, քու կումի տղի կնդանը պերած խոյսերը...

Թաքավերի կունի տըղան եր ա թըռնում, տըղինն ա ըխճեկանը կոլավն ունգում, լաց ինժն, պըշպըշորում: Թաքավերը թահուի ետ ա տանում, կյամ պալատը, պըդվալան կումի հարսին տուա օնում: Սարի Սումբուկ, Բաղի Բուլբուկը նազըլն ա անում էրկու մեծ քվորցը ըրարմունքը: Ծոխտին էլ կապում են ծիյին հաքյվան, պաց թողնում, ըսպանում: Թաքավերին մեծն ա միշնակ տղերքն էլ լավ-լավ կնանիք են օգում:

Ընդանը հըսան ուրանց մուրազին, տուք էլ հըսնեք ժեր մուրազին:

Հարյաթ, հարյաթ,
Մըն շուալ ցաքատ,
Վել կոթ օնի,
Վել արկաթ:
Երդարցին կըտերը օխտը կլուլ,
Օխտը կյալվին մըն բժկբժնլ,
Հասան, Հասան,
Տուռնը պաց,
Հասանը եկը
Կըլիւպաց:
Մըն հավ օնենք
Կըրկրչոց,
Մըն ծու ածեց
Զիմ տղնոց,
Պապին կերավ
Քյինաց հոնձ,
Արտում թողեց մըն
Կըլոնձ.
Տական կծեց.
Հազ ըրավ,
Կըլիւան կըծեց,
Տաշ ըրավ:

